

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

15.12.2021թ.

ք.Երևան

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Ավան, Նոր Նորք և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության կապիտան Աննա Զաքարյանս ուսումնասիրելով 29.11.2021թ. վերսկսված թիվ 02862705 կատարողական վարույթի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Երևան քաղաքի Ավան և Նոր Նորք վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի կողմից 14.07.2017թ. փրված թիվ ԵԱՆԴ/4944/02/16 կատարողական թերթի համաձայն պետք է Վահրամ Գնունիի Ղևոնդյանից հոգույ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ բռնագանձել 596502 ՀՀ դրամ և հաշվեգրվող փոկոսներ:

Պարտապանից բռնագանձել նաև ընդհանուր բռնագանձման ենթակա գումարի 5 փոկոսը որպես կատարողական գործողությունների կատարման ծախս:

Կատարողական գործողությունների ընթացքում պարտապան Վահրամ Գնունիի Ղևոնդյանը ներկայացրել է տեղեկանք առ այն, որ աշխատում է «Սոֆթ Կոնստրակտ» ՓԲԸ-ում որպես Խաղավար և ամսական զույր աշխատավարձը կազմում է 214179 ՀՀ դրամ:

Պարտապանին պատկանող բռնագանձման ենթակա այլ գույք և դրամական միջոցներ չեն հայտնաբերվել:

Պարտապան Վահրամ Գնունիի Ղևոնդյանի վերաբերյալ Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Երևան քաղաքի Ավան, Նոր Նորք և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների բաժնում առկա են հարուցված բռնագանձման բնույթի այլ կատարողական վարույթներ:

Կատարողական վարույթով բռնագանձման վերաբերյալ վճռի հարկադիր կատարման ընթացքում պարտապան Վահրամ Գնունիի Ղևոնդյանը ողջ գույքի վրա բռնագանձում փարածելու պարագայում պարզվել է, որ այդ գույքը օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապարիկի և ավելի չափով բավարար չէ պահանջարկի ողջ հանդեպ պարտավորությունների ամբողջական կատարումն ապահովելու համար և պարտապանին պատկանող գույք և այլ դրամական միջոցներ չեն հայտնաբերվել, որոնց վրա կարելի է բռնագանձում փարածել:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28-րդ, 28.1 հոդվածով և 37-րդ հոդվածի 8-րդ կետով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Կասեցնել 29.11.2021թ. վերսկսված թիվ 02862705 կատարողական վարույթը՝ 90-օրյա ժամկետով:

2. Առաջարկել պահանջարկի ողջ և պարտապանին՝ նրանցից որևէ մեկի նախաձեռնությամբ 90-օրյա ժամկետում սնանկության հայց ներկայացնել դատարան:

3. Սույն որոշումը երկու աշխատանքային օրվա ընթացքում հրապարակել www.azdarar.am ինտերնետային կայքում:

Որոշման պատճենն ուղարկել կողմերին:

Որոշումը կարող է բողոքարկվել վերադատության կարգով որոշումը ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան օրենքով սահմանված ժամկետներում:

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները